ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՍԵԿՏՈՐԸ

Վերջին տարիները ՍՍՀՄ-ում նշանավորվեցին գիտական ինֆորմացիայի բուռն վերելքով։ 1952 թ. կազմակերպվեց ՍՍՀՄ ԳԱ գիտական ինֆորմացիայի ինստիտուտ, որը 1955 թ. դեկտեմբերին վերակառուցվեց և դարձավ Համամիութենական գիտատեխնիկական ինֆորմացիայի ինստիտուտ (ВНИТИ)։ *Այն ներկայումս ունի ավելի քան 4000 հաստիքային և 25 հազար ոչ հաստիքային աշխատող, հրատարակում է 20 ռեֆերատիվ ամսագիր, գրականություն է ստանում աշխարհի 100 երկրներից՝ 70 լեզուներով։ Բացի վերոհիշյալ գիտատեխնիկական ինստիտուտից, որը աշխատում է ՍՍՀՄ ԳԱ-ի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի գիտության և տեխնիկայի պետական կոմիտեի ղեկավարության ներքո, երկրում կան 10 համամիութենական, 15 հանրապետական և 160 ճյուղային-տերիտորիալ ինֆորմացիոն ինստիտուտներ, կենտրոններ և շուրջ 9000 բաժիններ ու բյուրոներ, որոնց գիտա-ինֆորմացիոն ֆոնդը կազմում է մոտ մեկ միլիարդ նյութ, որը բնութագրում է գիտության, տեխնիկայի և արտադրության նվաճումները։ Գիտական ինֆորմացիայի ստեղծման գործում օգտագործվում են էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, միկրոֆիլմեր պատրաստող գործիքներ ու այլ սարքավորումներ։ Այժմ ավելի քան 100 հազար մարդ զբաղված է գիտատեխնիկական ինֆորմացիայի հավաքման և մշակման աշխատանքով։*

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշմամբ 1968 թ. ՍՍՀՄ ԳԱ կազմում ստեղծվել է հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի ինստիտուտ, որի տնօրինությանն է հանձնվել ԳԱ հասարակական գիտությունների ֆունդամենտալ գրադարանը։ Ղեկավարվելով կուսակցության և կառավարության որոշումներով, հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի ինստիտուտը (ИНИБОН) *արդյունավետ աշխատանք է ծավալում հումանիտար գիտությունների ինֆորմացիայի կազմակերպման, նրա մեթոդների կատարելագործման, սովետական գիտնականներին արտասահմանյան հասարակագիտական աշխատություններին ծանոթացնելու, մատենագիտությունը զարգացնելու ուղղությամբ։*

Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի միավորներ են ստեղծվել նաև միութենական հանրապետությունների ակադեմիաներում։

Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահությունը, ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1968 թ. հոկտեմբերի 22-ի, Հայաստանի կոմկուսի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1969 թ. հունվարի 15-ի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1969 թ. օգոստոսի 1-ի որոշումներով, Սովետական Հայաստանում հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի դրվածքը բարելավելու նպատակով ԳԱ նախագահությանն առընթեր ստեղծել է հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի ինքնուրույն սեկտոր, որը հանդիսանում է հանրապետությունում հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի միակ կենտրոնը և պետք է կոորդինացնի ինչպես գիտությունների ակադեմիայի, այնպես էլ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության, կուլտուրայի, լուսավորության, գյուղատնտեսության մինիստրությունների և այլ գերատեսչությունների հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի բաժինների, խմբերի և միավորների գործունեությունը։

Գիտական ինֆորմացիայի սեկտորի հիմնական խնդիրն է՝ բավարարել հասարակական գիտությունների հիմնարկների գիտական ինֆորմացիայի պահանջը։

ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ գիտական ինֆորմացիայի սեկտորը խնդիր ունի ռեֆերացիայի և անալիզի ենթարկել հայ ժողովրդի պատմությանն ու Հայկական ՍՍՀ-ին նվիրված հայրենական և արտասահմանյան պատմագիտական, փիլիսոփայական, տնտեսագիտական, բանասիրական (հայագիտական) աշխատություններն ու նյութերը, մատենագիտական ընթացիկ և հետադարձ բնույթի ինֆորմացիա տալ Սովետական Հայաստանում և նրա սահմաններից դուրս հասարակական գիտությունների գծով հայերեն, ռուսերեն և օ-

տար լեզուներով լույս տեսնող գիտական գրականության մասին։ Սեկտորը միաժամանակ պետք է կոորդինացնի և տեսական ընդհանրացման ենթարկի Սովետական Հայաստանում հասարակական գիտությունների դիտական ինֆորմացիայի բնագավառում ձեռք բերած փորձը, պատրաստի համապատասխան կադրեր, սահմանված կարգի համաձայն հասարակական գիտությունների գծով ինֆորմացիա տա հանրապետության կուսակցական և սովետական օրգաններին, գիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների դիտամանկավարժական աշխատողներին։

Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորը կազմված է գիտական չորս խմբերից՝ հասարակագիտական, տնտեսագիտական, բանասիրական, մատենագիտական—հրապարակումների։ Բացի այդ, սեկտորի տնօրինությանն է հանձնվել ԳԱ ֆունդամենտալ գրադարանի մասնաճյուղը՝ հասարակական գիտությունների բաժանմունքի գրադարանը, շուրջ 160 հազար օրինակ գրքով։

Սեկտորը անվճար ստանում է հանրապետությունում հրատարակվող հասարակագիտական գրքերը, թերթեր ու հանդեսներ։ Այն գիտական, գործնական կապեր է հաստատել Սովետական Միության գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի ինստիտուտի և ֆունդամենտալ գրադարանի հետ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի ինստիտուտին և ֆունդամենտալ գրադարանին սպասարկում է համապատասխան գիտությունների, այդ թվում՝ հայագիտության առավել աչքի ընկնող աշխատությունների վերաբերյալ գիտական ինֆորմացիայով։ Ինֆորմացիայի ինստիտուտը իր հերթին սեկտորին կանոնավոր կերպով ապահովում է սովետական և արտասահմանյան նոր գրականության վերաբերյալ գիտա-ինֆորմացիոն մատենագիտական բյուլետեններով և տեղեկատու գրականությամբ։ Ինստիտուտի թողարկած 26 մատենաշարի բյուլետենները հարուստ ինֆորմացիա են պարունակում ոչ միայն Սովետական Միության, այլև արտասահմանյան՝ ինչպես սոցիալիստական, այնպես էլ կապիտալիստական երկրների հասարակական գիտությունների վերաբերյալ։ Սեկտորը կանոնավոր կերպով ստանում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Արևելագիտության, Հեռավոր Արևելքի և այլ ինստիտուտների, Ուկրաինական, Վրացական, Մոլդավական, Ուզբեկական և մյուս եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների թողարկած հասարակագիտական ինֆորմացիոն նյութերը։

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորը պարբերաբար հրատարակում է գիտա-ինֆորմացիոն մատենագիտական բյուլետիններ։ «Մատենագիտություն» սերիայով առանձին պրակներով հայերեն և ռուսերեն լեզուներով լույս են տեսել «Կ. Մարքսի աշխատությունները հայերեն», «Ֆ. Էնգելսի աշխատությունները հայերեն», «Վ. Ի. Լենինի աշխատությունները հայերեն» բյուլետենները, որոնք կոչված են օգնելու Հայաստանում մարքսիզմի տարածման, մարքսիստական գրականության հայերեն հրատարակությունների պատմությունը հետազոտողներին, մարքսիզմի կլասիկների գրական մեծ ժառանգությունն ուսումնասիրողներին։ «Բյուլետենները» պատկերացում են տալիս 1890-ական թթ. մինչև 1970 թ. Հայաստանում և նրա սահմաններից դուրս Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների մասին։ Հրատարակվել է նաև 1970 և 1971 թթ. Սովետական Հայաստանում հասարակական գիտությունների գծով պաշտպանված դիսերտացիաների մատենագիտական ցուցակը։ «Սովետական հասարակագիտական նոր գրականություն» մատենաշարով լույս են տեսել «Բդեշխության ինստիտուտի հարցի շուրջը», «Հայ գիտնականների գործերը արտասահմանյան հանդեսների գնահատմամբ» և այլ բյուլետենները։

Սեկտորը զբաղվում է նաև սփյուռքահայ հասարակագիտական-հայագիտական գրականության գիտական ինֆորմացիայի կազմակերպման հարցերով։ Այն կապեր է հաստատելու արտասահմանի հայկական մշակութային օջախների հետ, սիստեմատիկաբար մատենագիտական ինֆորմացիայի նյութ դարձնելով սփյուռքահայ և արտասահմանյան հայագիտական աշխատությունները։ Այս առումով զգալի աշխատանք ունեն կատարելու սփյուռքի հայ մտավորականները, մշակութային օջախները և թերթերի խմբագրությունները, որոնցից մենք սպասում ենք սփյուռքում լույս տեսնող հայագիտական աշխատություններ, թերթեր ու հանդեսներ, առհասարակ բոլոր այն հրատարակությունները, որ առնչվում են հայ ժողովրդի պատմությանն ու հայագիտությանը։

Գիտական հասարակությունը ջերմորեն ընդունեց սեկտորի հրատարակած «Հայագիտությունը արտասահմանում» մատենաշարի թողարկումները, «Հայագիտությունը «Արարատի» էջերում» ռեֆերատը, «Ժամանակակից սփյուռ-

դահայ պարբերական մամուլը» մատենագիտությունը, օտար և սփյուռքի հայագիտական կենտրոններին նվիրված հաղորդումները։

Սեկտորի կարևոր խնդիրներից մեկը տնտեսագիտական ինֆորմացիայի կազմակերպումն է։ Ուշադրության կենտրոնում է պահվում տնտեսական նոր ռեֆորմի արդյունավետության, գիտատեխնիկական հեղափոխության, սոցիալիզմի քաղաքատնտեսության, Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության IX հնգամյա պլանի, աշխատանքի արտադրողականության բարձրացման, սոցիալիստական մրցության ծավալման, արտասահմանյան երկրների հետ Սովետական Հայաստանի տնտեսական կապերի և այլ պրոբլեմների գիտական ինֆորմացիայի ապահովումը։ Հարուստ նյութեր է պարունակում «Գիտատեխնիկական հեղափոխության տնտեսագիտական պրոբլեմները» մատենագիտական բյուլետենը։

Ինֆորմացիայի սեկտորը կազմակերպելու է գիտական նստաշրջաններ գիտական ինֆորմացիայի արդիական պրոբլեմների շուրջը, ինֆորմացիա է տալու Սովետական Հայաստանում հայերեն և այլ լեզուներով հրատարակվող գիտական կոմունիզմին նվիրված աշխատությունների մասին։

Գիտական ինֆորմացիայի կուտակման և մշակման ասպարեզում մեծ դեր ունեն կատարելու ոչ միայն գիտնականները, այլ նաև գիտական գրադարաններն ու մատենագետները։ Խնամքով կազմված կատալոգները, մատենագիտական ցանկերը, ինֆորմացիայի մյուս աղբյուրները հնարավորություն կտան ավելի հեշտ գտնելու գրքերում, պարբերական մամուլում ցրված, բայց հետաքրքրությունը չկորցրած նյութերը։

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գրադարանը գիտական ինֆորմացիայի սեկտորի տնօրինությանն անցնելու և գիտահետազոտական աշխատանքի բազա ծառայելու կապակցությամբ արմատական փոփոխություններ են մտցվել նրա կառուցվածքում և աշխատանքում։ Գրականության ֆոնդը հարստացվել է պատմագիտական, փիլիսոփայական, տնտեսագիտական, հայագիտական և այլ գրքերով։

Գրադարանը ամենից առաջ ծավալելու է գիտական-մատենագիտական աշխատանքը, ուշադրության կենտրոնում է պահելու Սովետական Միությունում և սփյուռքում հրատարակվող հայագիտական աշխատությունների գիտական ինֆորմացիայի և մատենագիտական ցանկերի ստեղծումը։

* * *

ՀՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորը գիտական նոր օջախ է հանրապետությունում։ Այն կոմպլեկտավորված է գիտական երիտասարդ կադրերով, որոնք, իբրև կանոն, բացի հայերենից և ռուսերենից ազատ կերպով տիրապետում են արտասահմանյան որևէ լեզվի։ Սեկտորը ինֆորմացիոն նյութերը կազմում և ընդհանուր օգտագործման մեջ է դնում «Հասարակական գիտությունների բնագավառում գիտական ինֆորմացիան բարելավելու միջոցառումների մասին» որոշման հիման վրա։ Առաջիկայում ևս նա մատենագիտական ցանկեր և գիտական ինֆորմացիա է կազմելու հասարակական գիտությունների, մասնավորապես՝ հայագիտության վերաբերյալ, ռեֆերատի է ենթարկելու արտասահմանում լույս տեսած հայագիտական աշխատությունները, գիտական շրջանառության մեջ է դնելու հայ գիտնականների աշխատությունների մասին արտասահմանում տպագրված գրախոսությունները։

Սեկտորը ջանալու է իր ուժերը լիովին ի սպաս դնել ՍՄԿԿ XXIV համագումարի կողմից հասարակական գիտությունների առջև դրված խնդիրների կենսագործմանը։

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների
գիտական ինֆորմացիայի սեկտորի վարիչ,
պրոֆ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ